ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 օգոստոսի 2012 թվականի թիվ 32 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄՈՎՍԵՍ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 160-ԱՄՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 2002թ մարտի 16-ի հրամանագրի 1.5 կետով

կարգադրում եմ.

1.Մովսես գյուղի դպրոցի հիմնադրման 160-ամյակը հանդիսավորությամբ նշելու կապակցությամբ ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սարգսյան Լևոն	նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ
Ադամյան Ռուզաննա	անդամ, Մովսես գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն
Ապերյան Լյուդվիգ	անդամ, Մովսեսի գյուղապետ
Ավալյան Արամ	անդամ, <<Ասպա Զեթ>> ՍՊԸ տնօրեն
Հակոբյան Յուրիկ	անդամ, <<Հիդրոսկոպ>> ՍՊԸ տնօրեն
Մխիթարյան Միշա	անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Փաշինյան Աշոտ	անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Փոլադյան Ռոբերտ	անդամ

2. Հանձնաժողովին՝
Մեկշաբաթյա ժամկետում հաստատել Մովսեսի դպրոցի 160-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների ծրագիրը:
3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել Մովսես գյուղում միջոցառումների անցկացման ժամանակահատվածում շտապ օգնության բուժանձնակազմի առկայությունը.
4.Դիմել Տավուշի մարզային ոստիկանությանը՝ միջոցառումների անցկացման ժամանակահատվածում պատշաճ հասարակական կարգուկանոն ապահովելու համար:
5.Դիմել Բերդի տարածաշրջանի կենսապահովման կազմակերպություններին՝ միջոցառումների անխաթար անցկացման պայմանների ապահովման համար:
6.Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լ.Սարգսյանի վրա:
7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

20 օգոստոսի 2012թ.
ք.Իջևան